



Հրատարակուել է  
Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան  
հովանաւորութեամբ

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԼ. ՏԱՐԻ 2016

## ԱՐԱՏՏԱ ԵՐԿՐԱՆՈՒԱՆ ԵՒ ՆՐԱՆ ԾՆՈՒՆԴ ՏՈՒԱԾ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ

Սարգիս Պետրոսեան

Նախնադարեան հողագործութեան զարգացման վրայ մեծ ազդեցութիւն ունեցող գործօններից էր կլիման: Հայկական լեռնաշխարհի կլիման, ի տարբերութիւն մեծ մասամբ չորային կլիմայով Միջագետքի, խոնաւ էր եւ զով: Հիւսիսային Աֆրիկայից մինչեւ Կենտրոնական Ասիա ձգուած հատուածում կլիմայի փոփոխութեան պատճառով Ասորիք-Միջագետքեան տարածաշրջանում տեղի էր ունենում հողագործական տարածքների կրճատում եւ բնակչութեան արտագաղթ<sup>1</sup>: Կարծում ենք, որ այս իրողութիւնների լոյսի ներքոյ պէտք է դիտարկել ինչպէս մարդկային ինչ-ինչ խմբերի Միջագետքից Հայաստան վերադառնալու եւ այնտեղից Հայաստան ներգաղթելու մասին հին աւանդազրոյցները, այնպէս էլ Հայկական լեռնաշխարհին հարաւային Միջագետքի բնակիչների կողմից տրուած Արատտա անունը:

Հայկական հին աւանդազրոյցներից մէկի համաձայն՝ Միջագետքում բռնատիր-

րած Բէլը Հայկական լեռնաշխարհ հեռացած հայոց նախահայր Հայկին դիմել է հետեւեալ բառերով. «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղկեա՛ ղցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ...»<sup>2</sup>: Ծովքի հայոց ժողովրդական «Մոքոս» վէպը պատմում է Հարաւային Միջագետքից Հայաստան գաղթած 12 արքայազունների մասին, որոնք Բաղդադի հիմնադիր Բաղ թագաւորի որդիներն էին. «Բաղ թագաւորի տեղ չօլխտան էր, ամառ ձմեռ շոգ էր»<sup>3</sup>: Բաղ թագաւորի վիպական կերպարի նախատիպերը Միջագետքի հին բռնակալներն են, ինչպէս «Սասնայ ծռերի» Բաղդադի խալիֆի եւ Հայկ նահապետի հակառակորդ Բէլի կերպարների ղէպքում: Պատահական չէ, որ Բէլի անունն նման Բաղ թագաւորի անունը եւս ծագում է սեմական նախալեզուի \*baʿl- (>աքաղ. bēlu «տէր, տիրակալ») արմատից: Այդուհանդերձ, «Մոքոսում» Բաղի

1 X. Кленгель, Архивы Эблы и история Сирии: Проблемы и перспективы, - "Древняя Эбла", М., 1985, стр. 207, 214 pp. 3.

2 Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, գիրք Ա, գլ. ժա:  
3 Մոքոս, Վաղարշապատ, 1896, էջ Դ:

որդիններից ոմանք հայ են համարում<sup>4</sup> (Հմմտ. կրտսեր Մսրամելիքի ծագումը): Բաղ թագաւորի երկիրը «չոլիստան» (չոր հարթավայր) է համարուել, ուր «ամառ ձմեռ շող» է, ի տարբերութիւն լեռնային, զով ու խոնաւ Հայկական լեռնաշխարհի: Այս փաստի մէկ այլ արձանագրման հանդիպում ենք «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» ականագրոյցում: Այստեղ երկու բնաշխարհների հակադրումը բացայայտում է Վան քաղաքը ամառանոց դարձնելու Շամիրամի մտադրութեան մէջ. «Սա հանապազ յամառնայինսն խաղալն իւրում ի կողմանս հիւսիսոյ ի քաղաքն ամարաստանի զոր շինեաց ի Հայս...»<sup>5</sup>:

Ք. ա. III հազարամեակի շումերական տեքստերում Հայկական լեռնաշխարհն անուանում է Aratta<sup>6</sup>: Այս երկրանունը պէտք է չփոթել ո՛չ Սարգոն II ասորեստանցու շատ աւելի ուշ՝ Ք. ա. 714 թ. հիւսիսարեւմտեան Իրանում յիշատակած Arrata գետանուն հետ (գագրոսեան Մանայ երկրին արեւելքից յարող տարածքում)<sup>7</sup>, ոչ էլ արեւելքից Ուրմիոյ լիճ թափող Վարառատ անունով<sup>8</sup> գետի հետ: Այդուհանդերձ, դրանք արմատակից տեղանուններ են, որովհետեւ դրանցում առկայ է հայերէն առատ բառը: Առատ նշանակում է «լի, յորդ, շատ» (>առատութիւն «չատութիւն»), նաեւ՝ «առատածեռն, առատ բաշխող, բարեգործ» եւ «անարատ,

պայծառ (աչք)»<sup>9</sup>: Վերջինիս առթիւ Հմմտ. ակն «աչք», որից՝ ակունք «ջրի աչք»: Վար-առատ գետանունը նշանակում է «ջրառատ» եւ հնդեւրոպական ծագում ունի, որովհետեւ նրա վար- բաղադրիչի հիմքում հ.-ե. \*uer-/\*ur- «ջուր, գետ» արմատն է. Հմմտ. թոխար. Ա. wār, Բ. var «ջուր, ճահիճ», հին հնդկ. vār- «ջուր», աւեստ. vairi «ծով», հին իսլ. vari «ջուր» եւ այլն<sup>10</sup>:

Առատ բառի «լի, յորդ» իմաստները խօսում են նրա եւ ջրային տարրերի նախապէս սերտ կապի մէջ ընկալուելու մասին: Ըստ այսմ, նրա «առատածեռն, առատ բաշխող, բարեգործ» իմաստների հիման վրայ այն փոխառեալ համարել պահել. rāt «վեհանձն, բարեբարոյ» բառից, չի կարելի: Դրա օգտին է վկայում հետեւեալը. 1) բառի միւս իմաստները ածանցուած են «լի, յորդ, շատ» նախնական իմաստներից, 2) անգամ այդ իմաստներով (առատածեռն, առատ բաշխող, բարեգործ) ընկալուած մեր բառը հեռու է պահել. rāt «վեհանձն, բարեբարոյ» բառի նշանակութիւններից: 3. Հ.-ե. \*rā- «տալ, բաշխել, շնորհել» արմատից ծագած իրանական եւ միւս լեզուների բառերը՝ ի տարբերութիւն հայ. առատ բառի, ջրային տարրերին չեն առնչւում<sup>11</sup>: Մեր կարծիքով Aratta երկրանուն հիմք առատ բառը հայերէն առո՛ւ՝ «վտակ, գետակ» բառի արմատակիցն է, թէպէտեւ, ճանաչում գտած տեսակէտի համաձայն, վերջինս ծագում է հ.-ե. \*sreu/\*srou- արմատի \*sru- տարբերակից<sup>12</sup>: Հ. Մարտիրոսեանը, Aratta-ի մէջ ա-

4 Գ. Գրիգորեան, Հայ ժողովրդական վիպերգերը եւ պատմական երգային բանասիրութիւնը, Գիրք երկրորդ. միջնադար, Երեւան, 1981, էջ 238:  
 5 Խորենացի, Ա, Ժէ:  
 6 Արատայի հայաստանեան տեղադրութեան վերջնական ճշգրտումը (եղած այլեայլ տեղորոշումների յիշատակումով) տե՛ս Ա. Մովսիսեան, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամեակում, Երեւան, 2005, էջ 16-29:  
 7 Հայ ժողովրդի պատմութեան քրեատմատիա, հտ. I, Երեւան, 1981, էջ 25:  
 8 Ս. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան. 1963, էջ 82:

9 Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱԲ ), հտ. Ա, Երեւան, 1971, էջ 255:  
 10 Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, стр. 882.  
 Գ. Ջահուկեան, Հայերէնը եւ հնդեւրոպական հին լեզուները, Երեւան, 1970, էջ 18:  
 11 ՀԱԲ, հտ. Ա, էջ 255:  
 12 Հ. Աճառեանը մերժում է այն կարծիքը, ըստ որի առատ եւ առո բառերի միջեւ կապ կայ, բայց կար հ.-ե. \*rs հոսել արմատը, որից -ու վերջածանցով (հմմտ. աղո, արո, թթո, կծո եւ այլն)

առատ բառը տեսնելով հանդերձ, այն առնչում է նաեւ Եփրատ գետանունը եւ Արատ երկրանունը<sup>13</sup>: Կարծում ենք, որ այս վերջիններն այլ ծագում ունեն, բայց նրա առաջարկած Արատտա-ի «ջրառատ երկիր» մեկնաբանութիւնն ընդհանրապէս հաւաստի է: Ըստ Վ. Իւանովի՝ հնդեւրոպական ծագումով Արատտա երկրանունը \*ar-<sup>(h)</sup>- նախածեւի միջոցով առնչւում է Արատտա գետանունը<sup>14</sup>: Բայց վերջին դէպքում նա հաշուի չի առել այն հանգամանքը, որ երկրանունն եւ գետանունն յիշատակութիւնների միջեւ աւելի քան 1500 տարուայ անջրպետ կայ: Բացի այդ, Արատտա երկրի այդպիսի տեղագրութիւնը (Հիւսիսարեւմտեան Իրանում) չի համապատասխանում Հիւսիսային երկրների հետ Շումերի ունեցած վաղ կապերի ուղղութեանը: Իսկ դրանք իրագործուած էին Եփրատի հոսանքն ի վեր ընթացող ճանապարհով:

Անգամ Ք. ա. III հազարամեակում շումերները չէին օգտուում հիւսիս-արեւելքում գտնուող գագրոսեան վտանգալից լեռնանցքներից եւ հիւսիս-արեւմուտքում գտնուող՝ յետագայում Ասորիքով Փիւնիկիա տանող ճանապարհից: Արեւմտեան եւ Արեւելեան Եփրատների գետախառնուրդի վայրում գտնուող Կապանի (այժմ՝ Բեքան) շրջանում յայտնաբերուած շումերական Ուրուկ-IV մշակոյթը կրած (Ք. ա. 3500-

կարող էին կազմուել առո, իսկ -ատ վերջածանցով՝ առատ (հմմտ. բացատ, խրամատ, խորխորատ, կնատ եւ այլն) բառերը:

13 Հ. Մարտիրոսեան, Հայոց հնագոյն պատմութեան էջեր, Երեւան, 2011, էջ 46 եւ ծան. 65:  
 Վ. Մատթէոսեանը մերժելով միմէտ իր յօդուածի հրապարակումը Արատտա երկրանունը տրուած ստուգաբանութիւնների գիտականութիւնը (Մատթէոսեան Վարդան, Մումերական աղբիւրներու Արատտա երկիրը եւ Հայկական լեռնաշխարհը, «Հանդէս ամսօրեայ», 1995, էջ 296-297), գրում է. «Արդ պէտք է ընդունինք, որ Արատտա անունին գոհացուցիչ բացատրութեան մը չենք համոզուած ցարդ» (էջ 296):  
 14 Т. Гамкрелидзе, В. Иванов, Ա. աշխ., հտ. II, էջ 1325:

3100 թթ.)<sup>15</sup> մարդկանց գաղթօջախը վկայում է, որ Մերձեփրատեան ճանապարհը բանուկ է եղել դեռեւս Ք. ա. IV հազարամեակում: Ըստ Ջ. Մելլաարտի՝ դրա բնակիչները այստեղ յայտնուել էին Արդանա-Մագէնի եւ շրջակայքի պղնձի ու արծաթի հանքերից օգտուելու նպատակով<sup>16</sup>: Անշուշտ, նրանք օգտուել են նաեւ Ծոփքի անտառներից՝ ամուր բնափայտից շինանիւթ ձեռք բերելու համար: Շումերները Ծոփք հասնել կարող էին բանուկ մերձեփրատեան ճանապարհով, որը նաեւ յարմար էր էջերի քարաւանները (ուղտերի քարաւաններ դեռեւս չկային) ջրով ապահովելու համար: Ք. ա. III հազարամեակում սա Շումերը հիւսիսային երկրներին կապող միակ բանուկ ճանապարհն էր, որովհետեւ Ասորական չոր տափաստանն հատող Պարմիրայի ճանապարհը դեռեւս օգտագործելի չէր<sup>17</sup>:

Aratta երկրանունն -ta բաղադրիչը կարող էր ծագել հ.-ե. \*tā- արմատից, որից ծագում են նաեւ հայերէն թանալ՝ «թրջել», թաց, թան՝ «ապուր», թօն՝ «տեղատարափ անձրեւ» բառերը, որոնք արմատակից են հին հնդկ. tōyam «ջուր», օսերէն thayun «հալուել», յուն. τήκω, τάκω, լատին. tabeo, հին սլաւ. tajati, ռուս. таять «հալուել, լուծուել», հին իսլ. tām, հին հիւս. Θα «ձնհալ գետին», անգլոսաքս. Thaw «թաց, խոնաւ, ջրալի» եւ այլ բառերին<sup>18</sup>: Մեր բարբառներում կայ նաեւ թէն «խոնաւութիւն, թացութիւն», որից թէնտ «խոնաւ»,

15 Khazai Khosro, Les grandes étapes de l'archéologie mésopotamienne, - "De Sumer à Babylone. Collections du Louvre", Bruxelles, 1983, p. 21.  
 16 Дж. Меллаарт, Торговля и торговые пути между северной Сирией и Анатолией (4000-1500 гг. до н. э.), - "Древняя Эбла", стр. 23-24.  
 17 X. Кленгель, Ա. աշխ., էջ 208: Եփրատի եւ մերձեփրատեան ճանապարհի դերը Հարապիս Միջագետքը Հայկական լեռնաշխարհին կապելու հարցում կարեւորում էր Գաւ Վ. Մատթէոսեանը (Ա. աշխ., էջ 292-293):  
 18 ՀԱԲ, հտ. Բ, Երեւան, 1973, էջ 150:

թէն իջնել «կանաչ խոտերի վրայ ցօղ նստել» եւ այլն<sup>19</sup>: Վ. Վ. Իւանովի առաջարկած ստուգաբանութիւնը՝ *Aratta* <հ.-ե. \*ar-<sup>(h)</sup>- ընդունելիս պէտք է նկատի առնել այս երկրանուն վերջնամասի -ta-ն առանձին բաղադրիչ համարելու հնարաւորութիւնը, \*ar-<sup>(h)</sup>-tā> \*Arattā> սեպագր. *Aratta* անցումների օրինակաբանութիւնը: Հայկական լեռնաշխարհը ջրառատ եւ խոնաւ երկիր լինելով, կարող էր կրել «առատ խոնաւութիւն», այսինքն՝ «առատ խոնաւութեամբ (երկիր)» անունը՝ որպէս հակադրութիւն իր հարաւային հարեւան Միջագետքի չոր տափաստանների:

Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ Արատուա երկրանունը, հնդեւրոպական-հայկական ծագում ունենալով հանդերձ, գործածուել է հարաւի ոչ հնդեւրոպացի ժողովրդի կողմից: Յիշենք, թէ նման այլ դէպքերի առթիւ ինչի վրայ էր ուշադրութիւն հրաւիրում Ն. Ադոնցը. «Ասորեստանցիներն են գործածել Ուրարտու եւ Նաիրի տերմինները, բայց դրանից դեռեւս չի բխում, որ սրանք ասորական, այսինքն՝ սեմական ծագում ունեն»<sup>20</sup>: Այս դէպքերի առթիւ հնարաւոր է հետեւեալ բացատրութիւնը: Ինչպէս յայտնի է հիւսիսարեւելեան Միջագետքում Ք. ա. ժ. դարի վերջերից հզօրացած Աշուր քաղաքի կառավարիչները հետզհետէ տիրացան նախկին Միտանիի թագաւորութեան տարածքին: Հիւսիսային Միջագետքի աքքադացի, խուռի, միտանիական արիացի եւ հայ բնակիչները, մշտական շփման մէջ լինելով հարեւան լեռնաշխարհի բնակչութեան հետ, ունեցել են սրանց երկրին եւ վերջինիս առանձին մասերին տրուած անուններ, որոնք յետագայում կիրառութիւն գտան Ասորեստանի թագաւորների սեպագիր արձանագրութիւններում: Ընդ

19 Նոյն տեղում, հտ. Բ, էջ 150-151:  
20 Ն. Ադոնց, Հայաստանի պատմութիւն. Ակումբները. X-VI դդ մ.թ.ա., Երեւան, 1972, էջ 269:

որում՝ հայկական էթնիկ տարրն առկայ էր անգամ Աշուր քաղաքի շրջակայքում՝ Կալաքենէում<sup>21</sup> (Ասորեստանի այդ շրջանը կրում էր նրա երբեմնի մայրաքաղաք Կալխուրի անունը)<sup>22</sup>:

Նոյն կերպ շուճերները ոչ թէ իրենք էին ստեղծել, այլ *Aratta* երկրանունը ժառանգութիւն էին ստացել շատ վաղ հարաւային Միջագետք թափանցած եւ այնտեղ հաստատուած հայերի հնդեւրոպական նախնիների ինչ-որ հատուածից: Դրա գոյութեան առթիւ Ս. Սարգսեանը գրում է. «Ենթադրում է, որ նրանք ծագում են լեռնային ժողովուրդներից՝ հաւանաբար իջած դեռեւս Նոր քարի դարի ժամանակ Հայկական լեռնաշխարհից»<sup>23</sup>: Յաւօք, անունի հնագէտը չէր կարող վերջնական եզրակացութեան յանգել լեռնցիների էթնիկական պատկանելութեան վերաբերեալ, քանի որ դեռ գոյութիւն չունէր մի շարք գիտաճիւղերի ընդգրկումով մշակուած ամբողջական տեսութիւնը, ըստ որի Հայկական լեռնաշխարհը եւ յարակից լեռնային շրջանները հնդեւրոպական ժողովուրդների նախահայրենիքը լինելու վերաբերեալ<sup>24</sup>: Ըստ երեւոյթին, դրանք եղել են պարզունակ բրիչային հողագործութեամբ զբաղուող եւ այդ իսկ պատճառով գետափնեայ արգաւանդ հողեր որոնող մեր այն նախնիները, որոնք Շուճեր էին հասցրել իրենց հայրենական տեղանունները, դրանց առնչուող աւանդութիւնները եւ լեռներում ծնունդ առած իրենց աստուածութիւնների պաշտամունքը:

21 Strabo, XI, 4, 9; XI, 14; 12 (Ստրաբոն, Քաղեց եւ թարգմանեց Լ. Աճառեան, Երեւան, 1940, էջ 33, 63):  
22 Ն. Ադոնց, նշ. աշխ., էջ 325, «Հայ ժողովրդի պատմութեան քրեատոմատիա», հտ. I, էջ 109, ծան. 6:  
23 Ս. Սարգսեան, Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում, Երեւան, 1967, էջ 227:  
24 Գ. Գամկրելիձե, Բ. Իւանով, նշ. աշխ., հտ. I-II:

Հարաւային Միջագետքի *Kuar(a)* քաղաքի<sup>25</sup> անունը անուրանալի կապի մէջ է հայկական Կուաւս տեղանուն եւ Կուաւ/սեպագր. *Quera* դիցանուն հետ: Հին հայկական աւանդազրոյցի համաձայն՝ Կուաւը մէկն էր Գիսանէ եւ Դեմետր աստուածութիւնների երեք զաւակներից: Նա Տարօնում «չինեաց զաւան Կուաւս, եւ վասն անունն նորա կոչեցաւ Կուաւս»<sup>26</sup>: Արարտեան դաշտի մի հատուածը՝ Կարմիր բլուրի (սեպագր. Թէյշեբախի) եւ էջմիածնի միջեւ, Ռուսա Բ-ի արձանագրութեան մէջ կոչուում է *Quarlini*<sup>27</sup>: Ն. Յարութիւնեանը Մհերի դուռն *Quera* աստուած անունն է տեսնում ինչպէս այս դաշտի անուն եւ Հայկական լեռնաշխարհի ուրիշ մի շարք տեղանունների ու ցեղանուն հիմքում, այնպէս էլ յիշեալ Կուաւի, նրա հիմնադրած բնակավայրի եւ նախարարական տոհմի անունն մէջ<sup>28</sup>: Կուաւին ծնունդ տուած Գիսանէն յստակ «Ջրային» բնոյթ ունեցած աստուածութիւնն էր: Նրա պաշտամունքի վայրը կոչուում էր Իճնակ-Աեան տեղիք, «զոր բարբբուխ ասեն ոմանք», իսկ նրա տաճարը գտնուում էր «առաջի աղբերն, ուր զբժշկութիւնս կատարէր»<sup>29</sup>: Սրանց պաշտամունքների ընդհանրութեան մասին խօսում է նոյն բնակավայրի՝ աւան Գիսիակէ եւ քաղաքագէտ Կուաւս կոչուելու փաստը<sup>30</sup>: Ուրեմն, Գիսանէի «Ջրային» բնոյթի եւ բուժիչ գործա-

25 Ա. Մովսիսեան, նշ. աշխ., էջ 57 ծան. 3, В. Афанасьева, Асаллухи, «Мифология. Золотой фонд. Энциклопедия», М., 2003, стр. 64.  
26 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Մատենադարձ շալոց Երեւան, 2006, էջ 1025:  
27 Գ. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, надп. N 27; Н. Арутюнян, Биайинли (Урарту), Ер., 1970, стр. 353-354.  
28 Н. Арутюнян, նշ. աշխ., էջ 354, ծան. 57:  
29 Յովհան Մամիկոնեան, նշ. աշխ., էջ 983, 1033:  
30 Նոյն տեղում, էջ 1009: Տե՛ս նաեւ Ս. Պետրոսեան, Դասերը եւ երազատութեան դրսեւորումները հին Հայաստանում, Երեւան, 2006, էջ 215-218:

նոյթների ժառանգորդը եղել է աւագ որդին՝ Կուաւը:

Ուրարտական Կուեւային եւս բնորոշ էին լինելու նոյնպիսի յատկանիշներ, որովհետեւ նրա պաշտամունքի մէջ, ինչպէս ցոյց է տուել Ս. Հմայեակեանը, ներառուած է եղել նաեւ քաղցրահամ եւ, ընդհանրապէս, ընդերքային ջրերի պաշտամունքը: Հմայեակեանի կարծիքով՝ Կուեւա-Կուաւ աստուած պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում գոյութիւն է ունեցել Ուրարտական թագաւորութեան կազմաւորումից առաջ, եւ «հնարաւոր է, որ Կուեւան հնդեւրոպական ծագում ունեցող մի աստուածութիւն է եղել»<sup>31</sup>: Մեր կարծիքով՝ Կուեւա-Կուաւ դիցանուն եւ միջագետքեան Կուաւս տեղանուն հիմքում ընկած կու արմատը նախապէս նշել է «ստորին աշխարհին» պատկանող տարրերը՝ Ջուրը եւ հողը, իսկ -աւ վերջածանցի յաւելումով ստացուած կուաւ բառը՝ դրանց առարկայացած երեւոյթները եւ անձնաւորած առասպելական էակներին (աւ վերջածանցի համար համտ. գաւաւ, խոչաւ, կայտաւ, հաւաւ, պայծաւ եւ այլն): Տարբեր ժողովուրդների առասպելաբանութիւններում նշուում է, որ ի սկզբանէ գոյութիւն ունէր միայն տիեզերական (համաշխարհային) ովկիանոսը, որի վրայ լող տուած կամ որի յատակից ձկան կամ առաջին ջրից թռչունի հանած տիղմը պնդանալով, սկիզբ է դրել ցամաքին<sup>32</sup>: Ժ. Վարբուրդու յարաւորութիւն է հրաւիրում հետեւեալին. քանի որ շատ ժողովուրդների տիեզերաստեղծման աւանդութիւններում հողը կորզում, հանում են նախնական ովկիանոսի ջրերից, «ըստ այդմ, ջրի եւ երկրի դիցու-

31 Ս. Հմայեակեան, Կուեւա-Կուաւ աստուածութեան պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, ՊԲՀ, 1990, թի 1, էջ 152. Այնպիսի, վաճառքաւորութեան պետական կրօնը, Երեւան, 1990, էջ 55:  
32 В. Топоров, Космогонические мифы, «Мифы народов мира», т. II, М., 1988, стр. 8.

Հու անուանումների կապը հնարաւոր է հասկանալ որպէս աշխարհի արարման մասին հին պատկերացումների, մասնաւորապէս՝ ջրի նկատմամբ հողի երկրորդային լինելու արտացոլումը»<sup>33</sup>:

Դրա արտացոլումն առկայ է նաեւ հայերէնի բառապաշարում: Հայերէնն ունի կու արմատի կա տարբերակը թէ՛ որպէս առանձին արմատ եւ թէ՛ նոյն առ վերջածանցով կազմուած բառ: Կա նշանակում է «չաղուած հող, տիղմ», «մի տեսակ հող, բրուտի կալ»<sup>34</sup>: Սա համարուում է հաւաստի ստուգաբանութիւնն չունեցող բառ, իսկ հին հնդկերէն կս «հող, երկիր» բառի հետ նրա ունեցած նմանութիւնը՝ պատահական զուգադիպութիւնն<sup>35</sup>: Ի դէպ, վերջինս նոյնական է խէթ. *kuera* «հողիտ, մարգագետին» բառի առջին բաղադրիչի հետ, որն էլ զուգորդում են ուրարտական սեպագրութեան *qi(u)ra* «երկիր, հող», «ընդերք, սանդարամէտ» բառի հետ<sup>36</sup>: Նշի-ի հեղինակները կա բառի արմատն են տեսնում կաւառ/կաւառ բառի մէջ<sup>37</sup>, որը նշանակում է «ջրի նեղ առու»<sup>38</sup>, «նեղ արիս, որով ջուրը կապում են ածուների մէջ», «ջրաբերան՝ այն կէտը, որտեղ ջուրը առուից բաժանուում է եւ ուղղուում է դէպի այգին. արիսի գլուխ»<sup>39</sup>: Կա եւ կաւառ(ն) բառերը այնպիսի իմաստային կապի մէջ են, ինչպիսին նկատելի է նաեւ հնդեւրոպական ծագումով գէտ (< հ.-ե. \*ued-) եւ առայժմ հաւաստի ստուգաբանութիւնն չունեցող

գէտին «հողի երեսը»<sup>40</sup> բառերի միջեւ (գէտ-ին հմտ. ամուսին, դարբին, լուսին, խորին, վերին եւ այլն): Հնչիւնական տեսանկիւնից կաւառ(ն) բառը ուղղակիորէն առնչուում է ինչպէս կուտա-կուառ դիցանուանը, այնպէս էլ միջագետքեան կուառ(ա) քաղաքանուանը՝ ներկայացնելով դրանց մի տարբերակը: Կաւառ(ն) եւ կուառ(ա) տարբերակների -աւ/-ու- համարժէքութեան տեսանկիւնից հմտ. աղաւ-ի/աղու-իկ, շաւառն/շուառն, տաւար/տուար եւ այլն:

Նոյն արմատի կու տարբերակն ենք տեսնում ինչպէս յունական Աթենաս դիցուհու *Kúαρη* մականուան<sup>41</sup> եւ հնագոյն փոքրասիական Մայր դիցուհու *Kubaba* անուան (որից փոխառ. լիւդ. *Κυβήβα/Κυβήλη*-ն) առաջին բաղադրիչների, այնպէս էլ Արարատեան դաշտի ուրարտական դաշարջանի *Aniqu* աստուածութեան անուան երկրորդ բաղադրիչի մէջ: *Κύαρη*-ն բաղադրած է *ku-* բաղադրիչին յաւելուած -*αρη*//-առ վերջածանցով, իսկ *Kubaba*-ն նոյնին յաւելուած *baba* «մայր» բառով, որը հ.-ե. \**mama* (< \**ma-ma*)<sup>42</sup> բառի տարբերակն է. հմտ. թրակ. Մայր դիցուհու *Mā//Bā* անունը<sup>43</sup>: Արարատեան դաշտի Անիկու աստուածութիւնը յիշատակուած է Ռուսա Բ-ի Կարմիր բլուրի եւ Զուարթնոցի արձանագրութիւններում<sup>44</sup>: Ընդ որում՝ դրանցում Անիկու աստուածութիւնը պատուաւոր տեղ է զբաղեցնում. յիշատակուած է ուրարտական գլխաւոր դիցական

33 Ж. Варбот, Праславянская морфонология, словообразование и этимология, М., 1984, стр. 167.  
34 ՀԱԲ, հտ. Բ, էջ 561:  
35 Նոյն տեղում:  
36 Ս. Հմայեակեան, Վանի թագաւորութեան պետական կրօնը, էջ 50. И. Мещанинов, Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., 1978, стр. 182-184.  
37 Նոր բաղադրիչի հայկազեան լեզուի, հտ. Ա, Եր., 1979, էջ 1079:  
38 ՀԱԲ, հտ. Բ, էջ 561:  
39 Ստ. Մալխասեանց, Հայերէն բաղադրական բաղադրիչ, հտ. Բ, Երեւան, 1944, էջ 416:

40 ՀԱԲ, հտ. Ա, էջ 537, 538:  
41 Հեսիքիոսի յիշատակած *Κύαρη*-ի «ուծել(ու-թիւն)» ստուգաբանութիւնը (< հ.-ե. \**kūro-s*<\**keu-* / \**ku-*), որն առաջարկել է Դ. Դեչեւը՝ «կատի առնելով հին հնդկ. *ḍūra* «ուծել, խիզախ, հերոս» բառը, համոզիչ չի թուում (տե՛ս Դ. Դեչեւ, *Характеристика на тракийския език*, София, 1952, стр. 33):  
42 Գ. Չահուկեան, նշ. աշխ., էջ 73:  
43 В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр. 131, Գ. Չահուկեան, նշ. աշխ., էջ 112:  
44 Г. Меликишвили, նշ. աշխ., արձ. թիւ, 281, 448:

եռեակից անմիջապէս յետոյ, իսկ դրանցից առաջինում՝ նաեւ գերագոյն աստուած ինչպիսի կին Ուարուբաինից առաջ: Այս հանգամանքը կարծես յուշում է, որ Անիկուի պաշտամունքը սերտ առնչութիւն է ունեցել Արարատեան դաշտի բնակչութեան համար կենսական նշանակութիւն ունեցող ջրային տարրերի հետ, մանաւանդ որ նրան յիշատակող Զուարթնոցի արձանագրութիւնը գրուել է Հրազդան գետից հանուած եւ էջմիածնի խոպան դաշտին ջուր մատակարարող ջրանցքի կառուցման առթիւ<sup>45</sup>: Կարծում ենք, որ նա դիցուհի է՝ ոչ թէ արական աստուածութիւն<sup>46</sup>: Այդ է վկայում նրա *Aniqu* (< \**aniqu*) անուան *Ani-* բաղադրիչը, որը նոյնական է հայ. հաւնի «մեծ մայր, տատ» բառի հետ: Սրա հիմքում հ.-ե. \**an-*/\**Han-* նախածն է, որից են ծագում նաեւ յուն. *ἄνις*, աֆղ. *anā*, հրգ. *ana*, պրուս. *ane* «մեծ մայր, տատ», լատին. *anus* «պառակին» եւ խէթ. *hanna* «տատ» բառերը, իսկ այս վերջինիցս կրկնութեամբ՝ *Hannahanna* դիցուհու անունը<sup>47</sup>: Իրենց հիմքում նոյն նախածնն ունեն նաեւ հայոց մայր դիցուհու համապատասխան մակդիրներն արտացոլող հայկական Հանի, Անի քաղաքանունները<sup>48</sup>: «Ջրանցք» հասկացութիւնը, առնչուելով ինչպէս հողին, այնպէս էլ ջրային տարրերին, նախապէս արտայայտել է մայր դիցուհու հողի եւ ջրային տարրերի անձնաւորողի բազմաբովանդակ գործունէութեան արգասիքներից մէկը:

45 Նոյն տեղում, արձ. թիւ 281. Հայ ժողովրդի պատմութեան քրեատմատիա, էջ 89:  
46 Հայ ժողովրդի պատմութեան քրեատմատիա, էջ 90, ծան. 6:  
47 ՀԱԲ, հտ. Գ, Երեւան, 1977, էջ 33. Т. Гамкрелидзе, В. Иванов, նշ. աշխ., հտ. II, էջ 766. О. Герни, Хетты, М., 1987, стр. 166:  
48 Լ. Պետրոսեան, Մի հին պաշտամունքի հետքերը միջնադարեան Անիում,- «ՀՀ ԳԱԱ ԾՀՀԿ գիտական աշխատութիւններ», հտ. IV, Գիւմրի, 2001, էջ 97-100. Ս. Պետրոսեան, Սամուսի Մայր դիցուհու պաշտամունքի ակունքները,- ՊԲՀ, 2004, թիւ 1, էջ 163-164:

Ջրի պաշտամունքը սերտ կապի մէջ էր նաեւ բարձր լեռների պաշտամունքի հետ: Բարձր լեռներ եւ դրանցից բխող բազմաթիւ գետակներ ու մեծ գետերի վտակներ ունեցող Հայկական լեռնաշխարհի բնոյթը պայմանաւորել է նաեւ բարձր լեռան պաշտամունքը՝ որպէս «ջուր բխեցնողի»: Օ. Տրուբաչեւը, տասնամեակներ առաջ ուշադրութիւն դարձնելով լեռների այդպիսի ընկալման վրայ, գրում էր. «Երբեք էլ չի զարմացնում հրաբուխի բնորոշումը՝ որպէս կրակ ժայթքող լեռ, բայց մեր կողմից վերականգնուող «լեռ» < «ջուր ժայթքող» նշանակութիւնն աւելի ընդհանրական է...»<sup>49</sup>: Հարաւային Միջագետքը լեռներից զուրկ երկիր է, առաւել եւս՝ չունի «ջուր բխեցնող» որեւէ բարձր լեռ, բայց շումերներն ունէին բարձր լեռան եւ Եփրատ ու Տիգրիս գետերի պաշտամունքը: Շումերներէն *KUR* թէ՛ «լեռ» էր նշանակում, թէ՛ «լեռնային երկիր» եւ թէ՛ «երկիր» ընդհանրապէս: Տափարակ այդ երկրի գերագոյն աստուած էնլիլի բնակավայրը Երկինքն ու Երկիրը միաւորող բարձր լեռն էր: Նա կոչուում էր նաեւ *KUR.GAL* «մեծ լեռ», իսկ նրա պաշտամունքի գլխաւոր տաճարը Նիպուր քաղաքում կրում էր *E.KUR* «լեռ տուն», «լեռան տուն» անունը<sup>50</sup>:

Յայտնի է, որ ընդերքային ջրերի անձնաւորում էնկի (աքքաղ. Հայա) աստուածը՝ էնլիլի հզօր որդին, պատկերուում էր նաեւ ուսերից կամ ձեռքին բռնած սափորից բխող ջրի վայրընթաց շիթերով: Դրանք Եփրատի ու Տիգրիսի խորհրդանշաններն էին: Էնկին երբեմն պատկերուում էր ոչ թէ մարդակերպ, այլ այծագլուխ առասպելական էակի տեսքով, իսկ այժը

49 О. Трубачев, Таврские и синдомеотские этимологии, «Этимология 1977», М., 1979, стр. 131.  
50 В. Авдиев, История древнего Востока, Л., 1953, стр. 105.

նրա կայուն խորհրդանիշն էր<sup>51</sup>: Առասպելաբանական մտածելակերպով քարայծր եւ եղջերաւոր միւս կենդանիները համադրուած էին լեռների հետ: Դրա արգասիքներն են հայոց Այծպտկունք, Արտին, Արտոս (հմտ. արտի, արտիկ «վայրի ոչխար»), Աոնու (հմտ. աոն «վայրի խոյ»), Եղջերք, Պախր(այ), Սրմանց («սիրամ «պիսակաւոր եզ, կով» <հ.-ե. \*ker- «եղջիր»»), Տարոս, Յլու գլուխ, Յու լեռնանունները: Իսկ բարձր լեռներից սկիզբ առնող գետերի եւ այծի առասպելաբանական կապի տեսանկիւնից ուշագրաւ են յատկապէս Տիգրիսի հին Dignat/Diglat անունը (հմտ. հ.-ե. \*dig- «այծ», որից՝ հայ. տիկ) եւ Սասնայ լեռներում ակունքներ ունեցող նրա վտակի հին հայկական Քաղիթ (<քաղ «արու այծ») անունը<sup>52</sup>: Բնականաբար, տափարակ Շուների ծնունդ որեւէ աստուածութիւն չէր կարող ըմբռնուել միեւնոյն ժամանակ ընդերքային ջրերի անձնաւորում եւ այծագլուխ, ինչպէս էնկին: Նրա նախատիպը փնտրելու ենք Հայկական լեռնաշխարհում, որովհետեւ այստեղ էին նրա սրբազան գետերի՝ Տիգրիսի եւ Եփրատի ակունքները, ընդ որում՝ քարայծրի (բեզոարեան այծ) բնակեցրած լեռնային բարձունքներում:

Լեռնային բարձունքների, ակունքների եւ քարայծրի առասպելաբանական փոխկապուածութեան հետեւանքն է նաեւ այնպիսի մի երեւոյթ, ինչպիսին է սրբազան ցուլեր պատկերող միջագետքեան կուռքերի փարթամ մօրուքը: Իրականու-

թեան մէջ բացառուած այդ երեւոյթը նրանք ժառանգել էին իրենց նախատիպից՝ հայկական շատ ցեղերի պաշտելի տոտեմ արու քարայծրից<sup>53</sup>: Ուր քաղաքի արքայական գերեզմանոցի պեղումներից յայտնաբերուած «Այծը թփի մօտ» փոքր արձանախումբը պատրաստուած է ոսկոց, լաշուարդից եւ սադափից<sup>54</sup>: Ընդ որում՝ շուներները, լաշուարդէ մօրուքը աստուածային նշան համարելով, դրանով օժտուած էին նաեւ սրբազան ցուլերի արձանիկները<sup>55</sup>: Այդպիսի մօրուքը ջրամամուռէ մօրուքի յետագայ վերափոխումը լինելու առթիւ յիշենք հայ ժողովրդական հէքեաթներում հանդիպող ջրերի թագաւորին. «Ջրերու թագաւոր գելնայ յաղբրակից... խորոտ հալուոր մէ, գլխուն՝ օսկէ թագ, ուր շորեր՝ փրփուր, ուր աչքեր՝ կանանչ կթղայ, ուր մուրուք՝ կանանչ մամուռ, սադափ գաւազանն ի ձեռ»<sup>56</sup>: Ինչպէս տեսնում ենք, նիւթերը՝ ոսկի, սադափ, նոյնն են, իսկ լաշուարդի փոխարէն կանաչ մամուռն է՝ դրա գունային համարժէքը: Ուրեմն, մեր հէքեաթների «Ջրերի թագաւորը», Կուաո/Quera-ն եւ շուներական էնկի դիցայծը, որպէս առասպելաբանական կերպարներ, ձեւաւորուել են միեւնոյն նախատիպի հիմքի վրայ: Դա եղել է լեռնաբուխ ընդերքային ջրերի այծակերպ ոգին:

Ստրաբոնի յիշատակած եւ Արգոնաւորդների առասպելի հետ միտումնաւոր կապուած աւանդութիւնը ցոյց էր տալիս նաեւ այն ելակէտը, որտեղից հայոց նախ-

51 Նոյն տեղում, էջ 104, D. Homés-Fredericq, *La religion en Mésopotamie de Sumer à Babylone*, p. 45, fig. 55; Khazai Khosro, *Այծաւոր*, էջ 30, ԳԼ. 33; В. Афанасьева, *Гильгамеш и Энкиду*, М., 1979, стр. 124-125, табл. XX, рис. А; *Мифы народов мира*, М., 1988, т. II, стр. 648 рис., стр. 651 рис., *История древнего Востока*, под. ред. В. И. Кузищина, М., 1979, стр. 178.

52 Ս. Պետրոսեան, *Դրախտի գետերի եւ խափիւս, Քուշ երկրների տեղադրութեան շուրջ*, ՊԲՀ, 2006, թիւ 2, էջ 243, 245-246:

53 Ս. Պետրոսեան, *Հնագոյն Հայաստանի գլխաւոր աստուածութիւնների շուրջ*, «Հայաստանի էկոլոգիական հանդէս», 2, Երեւան, 2003, էջ 125-133. Գոյնի, *Հայոց մեհեհագրութեան ակունքներում*, Գիւմրի, 2008, էջ 10-11, 14-19:

54 *Le Barceau de l'humanite*, Genève, 1976, p. 102, fig. 147.

55 M. E. Mallowan, *L'aurore de la Mesopotamie et l'Iran*, Editions Sequoia, Paris-Bruxelles, 1966, p. 94, fig. 102.

56 *Հայ ժողովրդական հէքեաթներ*, հտ. X, Երեւան, 1976, էջ 19:

նիւներ ինչ-որ հատուած թափանցել էր հիւսիսային Միջագետք՝ Կալաքէն եւ Ադիաբէն: Իսկ դա եղել է Բարձր Հայքը: Նա գրում է. «Ասում են նաեւ թէ Արմէնոսը Արմէնիոն քաղաքից էր... թէ իր հետ եղողներն էլ բնակեցան Ակիլիսենէ (=Եկեղիք) եւ Սուսպիրիտիս (=Սպեր)՝ մինչեւ Կալաքենէ եւ Ադիաբէն. սա է, որ իր անունը թողել է Հայաստանին»<sup>57</sup>: «Նաեւ թէ Արմէնոսի հետ եղողները բնակեցան Եկեղիք, որ նախապէս Ծոփաց տակ էր, միւսները Սիւսպիրիտիսում՝ մինչեւ Կալաքէն եւ Ադիաբէն, Հայաստանի սահմաններից դուրս»<sup>58</sup>: Ըստ «Աշխարհացոյցի», թէ՛ Ակիլիսենէ/Եկեղիքը, թէ՛ Սուսպիրիտիս/Սպերը Բարձր Հայքի դաւառներից էին<sup>59</sup>: Այստեղից ելած բնակչութիւնը Եփրատի հոսանքն ի վայր ընթանալով ի վերջոյ կարող էր հասնել հարաւային Միջագետք: Թւում է, թէ դա հէնց այդպէս էլ եղել է, որովհետեւ շուներերէն KUR բառի պարունակած իմաստները եւ նրա գրութիւնը համապատասխանում են Բարձր Հայքի աշխարհագրական բնութագրին:

Ինչպէս վերելում նշուեց, շուներերէն KUR-ը ոչ միայն «լեռ» էր նշանակում, այլեւ «լեռնային երկիր» եւ «երկիր» ընդհանրապէս, իսկ դրա սեպագիր համարժէքը (աքքադ. ընթերցմամբ՝ šadu «լեռ») բաղկացած էր 3 սեպանշաններից: Վերջինների հիմքում երեք բարձունք պատկերող շումերական այս  պատկերագիրն է<sup>60</sup>: Իսկ Բարձր Հայքի վերաբերեալ «Աշխարհացոյցում» կարդում ենք. «Ըստ անուանդ

արդարեւ բարձր է ոչ միայն քան [զմնացեալ] Հայք, այլ քան զամենայն Երկիր, վասն որոյ Կատար Երկրի կոչեցին զնա... Ունի լերինս մեծ երիս»<sup>61</sup>: Բայց միայն սա չէ: «Աշխարհացոյցում» խօսուած է նաեւ Բարձր Հայքից սկիզբ առնող չորս գետերի մասին (հմտ. Դրախտի չորս գետերը): Այնտեղ կարդում ենք. «Կատար երկրի կոչեցին զնա, զի չորս կողմ աշխարհի ջուր արձակէ. զի բոլի է չորս գետս զօրեղս. զԵփրատ՝ յարեւմուտս, եւ զԵրասխ՝ յարեւելս, զԳայլ՝ ի հարաւ, զԱկամսիս, որ է Վոհ՝ ի հիւսիս»<sup>62</sup>: Առաջինն յիշատակուած Եփրատը Շումերը եւ Հայկական լեռնաշխարհը միմեանց կապող գլխաւոր ճանապարհն էր: Եփրատն առաջինն է յիշատակուած նաեւ Դրախտի չորս գետերի թւում<sup>63</sup>: Այն, ինչպէս վերելում նշուեց, Շումերի գլխաւոր աստուածներից մէկի՝ Էնկի (աքքադ. Հայա) աստծու երկու սուրբ գետերից մէկն էր:

Անտարակոյս, Շումերի եւ Հայկական լեռնաշխարհի միջեւ եղել են նաեւ հնդեւրոպական-հայկական բնակչութեամբ այլ շրջաններ: Օրինակ՝ մէկը կարող էր գտնուել Ասորիքում, որտեղ յայտնաբերուել են Կուր-Արաքսեան մշակոյթի ածանցեալ Խիրքեթ-Քերաքեան մշակոյթի նիւթեր<sup>64</sup>: Ք. ա. III հազարամեակի երկրորդ կէսին ներկայիս Հալէպից մօտ 50 կմ հարաւ գտնուած Էբլա քաղաքի սեպագիր տեքստերում յիշատակուած տեղանունները, Ի. Գելբի կարծիքով, ո՛չ շումերական են, ո՛չ սեմական, ո՛չ էլ խուռիական, այլ բացայայտում են մի անձանօթ էթնիկական ենթաշերտ<sup>65</sup>: Այս ենթաշերտին են պատկանելու Եփրատի միջին հոսանքի

57 Ստրաբոն, *Քաղեց եւ թարգմանեց Հ. Աճառեան*, էջ 33 (Strabo, XI, 4, 9):

58 Նոյն տեղում, էջ 62-63 (Strabo, XI, 14, 12):

59 Ս. Երեմեան, *Այծաւոր*, էջ 44, 50, 81, 106:

60 Ս. Պետրոսեան, *Հայկական լեռնաշխարհի տեղը Էնկի եւ Էնկի աստուածների պաշտամունքում*, «Շիրակի պատմամշակութային ժառանգութիւնը միջազգային ութերորդ գիտական նստաշրջանի նիւթեր», Գիւմրի, 22-24 հոկտեմբերի 2010, է, Երեւան, 2010, էջ 58-65:

61 Ս. Երեմեան, *Այծաւոր*, էջ 106 եւ ծան. 3:

62 Նոյն տեղում, էջ 106:

63 Տե՛ս ԾԱՆՈՒ. Բ, 11-15:

64 Գ. Գամբրելիզե, Բ. Իվանով, *Այծաւոր*, հտ. II, էջ 893-894:

65 I. Gelb, *Ebla and the Kish Civilization*, «La lingua di Ebla», Napoli, 1981, p. 64.

չըջանի հնագույն բնակավայրերից մասնա-  
 ւորապէս նրանք, որոնք ունեն -an տեղա-  
 նուանակերտ վերջածանցներ: Դրանցից  
 են Appan, Barhan, Bisan, Bit-Kannan,  
 Dagilan, Mišlan, Kattunan եւ այլն<sup>66</sup>: Կար-  
 ծում ենք, որ այս եւ այսպիսի վերջածան-  
 ցով տեղանունների ստեղծման մէջ իր բա-  
 ժինը կարող էր ունենալ նաեւ հնդեւրո-  
 պական-հայկական էթնիկ տարրը (Հմմտ.  
 հին Հայաստանի տեղանուններից Ալեւան,  
 Գարդման, Դերջան, Երեւան, Թորդան,  
 Կնճան, Կորիճան, Նկան, Սեւան եւ այլն, ո-  
 ռոնց տեղանունակերտ բաղադրիչները  
 նոյնն են հայ. բերան, գերան, գլան, դերձան,  
 դորան, խարան, խորան, ծորան, կոան եւ այլ  
 բառերի -ան վերջածանցի հետ):

Արատտա երկրանուն հնդեւրոպա-  
 կան ծագման մասին է խօսում նաեւ հին  
 հնդիկների կողմից դրա կիրառման փաս-  
 տը: «Մահաբհարատա» դիւցազնավէպում  
 այդպէս է կոչուած յետագայ Փան-  
 ջաբ/«Հնգագէտք» նահանգը: Անշուշտ,  
 միջինասիական ու իրանական չոր տա-  
 փաստանները լքած եւ ջրառատ Փենջա-  
 բում հաստատուած հնդարիական ցեղերն  
 իրենց նոր հայրենիքը Արատտա կոչել են  
 ի յիշատակ իրենց՝ արդէն յուշ դարձած  
 նախահայրենիքի՝ Հայկական լեռնաշխար-  
 հի<sup>67</sup>: Արատտան նախահայրենիքը լքած  
 բնակչութեան յիշողութիւններում նաեւ  
 պաշտամունքի առարկայ էր, անգամ՝ երկ-  
 նային տեղադրումով: Միջագետքի աստ-  
 ղագէտները երկնային Յուլ համաստեղու-  
 թիւնը եւս կոչել են Արատտա<sup>68</sup>: Թէ ի՞նչ

66 П. Гарелли, Замечания по топонимике из архи-  
 вов Эблы, - "Древняя Эбла", стр. 283-284, 285,  
 293; А. Арки, Заметки о географическом кру-  
 гозоре текстов Эблы III тыс. до н. э., - "Древняя  
 Эбла", стр. 308.

67 Տե՛ս նաեւ Ա. Մովսիսեան, նշ. աշխ., էջ 29:

68 Նոյն տեղում, էջ 83, ծան. 6:

կապ կարող էին նրանք նկատած լինել  
 «ցուլ» եւ «Արատտա» հասկացութիւնների  
 միջեւ ցոյց է տալիս Արատտա երկրա-  
 նուան հիմք հ.-ե. իՏ- «հոսել» (>հայ. \*առ-,  
 որից առու եւ առատ) արմատից ծագած  
 բառերի իմաստային տարբերակուածու-  
 թիւնը: Այդ բառերի մի մասը ազգակից լե-  
 զուներում պարունակում է «հոսող  
 (նիւթ)», իսկ միւս մասը՝ «հոսեցնող  
 (էակ)» իմաստները: Հմմտ. հին հնդկ.  
 árṣati «հոսել», rāsa «հիւթ», լատին. rosa,  
 հին սլաւ. rosa, լիտ. rasà «ցող», իսկ հայ.  
 առն «վայրի խոյ», հին հնդկ. ṛṣabhá  
 «ցուլ», հին պարս. aršan «այր, տղա-  
 մարդ», յուն. ἄρσην, ἄρρην «արու, այր,  
 առնական», հոմեր. յուն. ἀρνείος «խոյ»՝  
 «ըմբռնուելով արուն իբրեւ «հոսեցնող»<sup>69</sup>:

Այսպիսով, Միջագետք-Ասորիքեան  
 տարածաշրջանում վաղ նախնադարում  
 հաստատուած հնդեւրոպական, ապա եւ՝  
 հնդեւրոպական-հայկական էթնիկ տարրի  
 ներկայացուցիչները կարող էին պահած  
 լինել յիշողութիւնը իրենց հիւսիսային,  
 դով ու խոնաւ հայրենիքի մասին, եւ ի  
 տարբերութիւն ու ի հակադրութիւն Մի-  
 ջագետք-Ասորիքի արեւակէզ հարթու-  
 թիւնների, այն կոչել Aratta: Այս անունը  
 նրանց ըմբռնումով պարունակել է կորու-  
 սեալ Դրախտին վերաբերող առատ բառի  
 բոլոր իմաստները՝ «լի, յորդ», «առատա-  
 բաշխ, բարեգործ», «պայծառ, անարատ»:  
 Այսպիսի տարողունակ իմաստներ պարու-  
 նակած Aratta երկրանունը նրանցից էր  
 ժառանգութիւն մնացել հին շումերներին:

69 ՀԱԲ, ֆուն. Ա, էջ 261:

ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՍԱՏՐԱՊՈՒԹԵԱՆ  
 ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Յովհաննես Խորիկեան

Յոյն պատմիչ Հերոդոտոսը, անդրա-  
 դառնալով Աքեմենեան տէրութեան VIII  
 սատրապութեանը, գրում է. «Սուսայից եւ  
 կիսսիեցիների երկրի մնացած մասից վերց-  
 ւում էր երեք հարիւր տաղանդ: Սա ութե-  
 րորդ նահանգն էր»<sup>1</sup>: Այս տեղեկութիւնից  
 հարց է ծագում, թէ կիսսիեցիներ-կիսսիա-  
 ցիների երկրի մնացած մասը ո՞ր սատրա-  
 պութեան մէջ է եղել, կամ էլ արդե՞օք  
 հէնց Սուսան է համարուել կիսսիեցիների  
 երկրի մի մասը:

Պատմիչի միւս տեղեկութիւնները  
 Սուսայի եւ կիսսիեցիների վերաբերեալ  
 բացայայտում են կարեւոր իրողութիւն-  
 ներ: Այսպէս, Քսերքսէսի Հելլադա արշա-  
 ւող բանակի կազմում պարսիկներից, մե-  
 դացիներից յետոյ յիշատակուած են կիս-  
 սիացիները<sup>2</sup>, ինչը վկայում է տէրութեան  
 մէջ նրանց ունեցած բարձր դիրքի մասին:

Էլամացիները կամ սուսիանացիները  
 իրենց ռազմական ուժով շատ հնուց էին  
 յայտնի<sup>3</sup>: Ըստ էութեան, Սուսայում պար-  
 սիկները միշտ էլ մեծաթիւ զօրք են պա-

հել<sup>4</sup>: Էլամերէնը Աքեմենեան տէրութեան  
 պաշտօնական լեզուներից մէկն էր եւ  
 գործածուած էր հիմնականում վարչարա-  
 րութեան մէջ<sup>5</sup>: Պերսեպոլիսի բարձրաքան-  
 դակներում էլամացի հարկատուները  
 պատկերուած են երկրորդ տեղում<sup>6</sup>:

Հերոդոտոսի յաջորդ տեղեկութիւնից  
 պարզուած է, որ Սուսան գտնուած էր  
 Քոասպէս գետի ափին՝ Կիսսիա երկրում<sup>7</sup>:  
 Քոասպէս գետը, որի ջուրն էին միայն  
 խմում Աքեմենեան արքաները<sup>8</sup>, նոյնա-  
 նում է Դանիէլի մարգարէութեան մէջ յի-  
 շատակուող Ու(ք)լաղ գետին, որի ափին էր  
 գտնուած Էլամի Շօշ ապարանքը<sup>9</sup>, այ-  
 սինքն՝ Էլամի անուան տակ հասկացուել է  
 նաեւ Սուզան: Ուլաղ գետը նոյնանում է  
 յունական աղբիւրներում յայտնի Εὐλαϊος-  
 ին, որը ժամանակակից Քարխեհը<sup>10</sup> կամ  
 Քարունն է:

Սուզայի սեպագիր արձանագրու-  
 թիւններից մէկում Սուսան՝ Էլամի թագա-  
 ւորութեան հին մայրաքաղաքը, յայտնի է  
 Çūšā անունով, էլամերէն եւ բաբելոներէն  
 Šu-ša-an, եբրայերէն Šu-šn ձեւերով<sup>11</sup>: Սու-

1 Հերոդոտոս, Պատմութիւն իմը գրքից, թարգմա-  
 նութիւնը Ա. Կրկեաշարեանի (այսուհետեւ՝ Հերո-  
 դոտոս), Երեւան, 1986, III, 91:  
 2 Նոյն տեղում, VII, 62, 210: Տե՛ս, օրինակ, J.  
 Yoyotte, Les inscriptions hiéroglyphiques. Darius et  
 l'Égypte, - "Journal Asiatique", t. 260, Paris, 1972, f.  
 3-4, p. 258. Կիսսիացիներից նոյնացրել են կա-  
 շիս-կասիսների ֆես, որոնք Հերոդոտոսի մօտ  
 փոխարինում են էլամացիներին (տե՛ս Ա. Թ.  
 Olmstead, History of the Persian Empire, Third  
 Impression, Chicago, 1960, pp. 161, 212, 239; Ի.  
 М. Дьяконов, Языки древней Передней Азии,  
 Москва, 1967, с. 87):  
 3 Ctesias' History of Persia: tales of the Orient,  
 translated with commentaries by L. Llewellyn-Jones  
 and J. Robson, London, New York, 2010, p. 132.

4 Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ա. Կրկեաշա-  
 րեանի, Երեւան, 1970, էջ 49:  
 5 Ctesias' History of Persia, p. 56.  
 6 М. А. Дандамаев, В. Г. Луконин, Культура и  
 экономика древнего Ирана, Москва, 1980, с. 193.  
 7 Հերոդոտոս, V, 49, 52:  
 8 Նոյն տեղում, I, 188: Տե՛ս նաեւ Ctesias' History of  
 Persia, p. 217. Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացի  
 (այսուհետեւ՝ Ռուփոս), Երեւան, 1987, էջ 376:  
 9 Տե՛ս Դանիէլ, Ը 2:  
 10 G. G. Cameron, History of Early Iran, Chicago,  
 Illinois, 1936, p. 189.  
 11 R. Kent, Old Persian. Grammar. Texts. Lexicon.  
 2nd ed., New Haven, 1953, pp. 143, 188.